

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

	2018թ. հունվար- հունիս	Տեսակարար կշիռ, %	2019թ. հունվար- հունիս	Տեսակարար կշիռը, %	Աճի տեմպը, %
Ընդամենը զբոսաշրջիկներ ^{1,2}	158 756	100.0	235 456	100.0	148.3
որոնցից՝ ըստ նպատակի					
գործնական	36 303	22.9	43 215	18.3	119.0
հանգստի և ժամանցի	111 035	69.9	167 350	71.1	150.7
կրթության	-	-	446	0.2	-
բուժման	5 370	3.4	6 281	2.7	117.0
այլ	6 048	3.8	18 164	7.7	3.0 անգ.

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՋՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

²Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: